ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ. 2022-2024 թթ

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ

Երևան, 2025թ

«Ուրբան հիմնադրամի» հոբելյանական 20-ամյա հանգրվանի ազդեցությունը

2024թ նշանակալի էր՝ «Ուրբան հիմնադրամի» համար. Հիմնադրամը տոնեց իր գործունեության 20-ամյակը: Այս երկու տասնամյակները նշանավորվեցին ազդեցիկ ծրագրերի միջոցով Հայաստանի համայնքների կայուն ու ներդաշնակ զարգացմանը, ծառայությունների բարելավմանը խթանող բացառիկ նվիրվածությամբ ու հանձնառությամբ:

«Ուրբան հիմնադրամը» ստեղծվեց 2004 թ ապրիլին՝ Վաշինգտոնի «Ուրբան ինստիտուտի» (Urban Institute) և նրա հայաստանյան նվիրյալ թիմի ջանքերով: Թիմը 2000-2004թթ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ հաջողությամբ իրականացրեց Հայաստանի՝ Երկրաշարժի գոտու վերականգնման ծրագիրը, որը երկրաշարժից տուժած 7,000 ընտանիքների ապահովեց մշտական կացարաններով:

«Ուրբան հիմնադրամի» ղեկավար կազմը

Մեր ուղին նշանավորվել է նորարարական մոտեցումներով, համագործակցությամբ և շոշափելի արդյունքներով: Հետադարձ հայացք նետելիս առանձնանում են մի շարք կարևոր ձեռքբերումներ. իրականացրել ենք ավելի քան 100 ծրագիր, որոնք ուղղված են եղել ենթակառուցվածքների բարելավմանը, իրավա-քաղաքական բարեփոխումներին, կենսական ծառայությունների մատչելիությանը, տասնյակ-հազարավոր քաղաքացիների կյանքի որակի բարձրացմանը: Համայնքների զարգացման ու կարողությունների հզորացման մեր նախաձեռնությունները քաջալերել են հանրային մասնակցությունը՝ ձևավորելով սեփական համայնքի նկատմամբ պատասխանատվության ու սեփականատիրոջ զգացում: Ճարտարապետա-մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ մեր ծրագրերը ապահովել են պատմական վայրերի պահպանությանը, Հայաստանի հարուստ մշակութային ժառանգության արժևորմանը:

Միշտ առաջնորդվելով յուրաքանչյուր համայնքին բնորոշ կարիքների խոր ըմբռնման գիտակցությամբ՝ մենք առաջնորդվել ենք տվյալների ու հետազոտությունների վրա հիմնված պլանավորմամբ՝ ապահովելու մեր նախաձեռնությունների երկարաժամկետ կայունությունը: Միաժամանակ, մեր աշխատանքի ազդեցություն բազմապատկելու նպատակով, «Ուրբան

հիմնադրամի» գործունեության հիմքում դրվել է սերտ համագործակցությունը պետական մարմինների, համայնքների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

Թվերն ավելի խոսուն են: Վերջին 20 տարիներին, Հայաստանի բոլոր 10 մարզերում և Երևանում, 45 բազմաբնակավայր համայնքում և ավելի քան 150 բնակավայրում իրականացված ավելի քան 100 ծրագրի միջոցով դրական փոփոխություններ են տեղի ունեցել ավելի քան 300,000 մարդու կյանքում:

Այս հաջողությունը անհնարին կլիներ առանց մեր գործընկերների անշահախնդիր աջակցության: Մենք խորին երախտագիտություն ենք հայտնում մեր աջակիցներին (պետական կառույցներին, միջազգային կազմակերպություններին, անհատ բարերարներին և մասնավոր հատվածին), որոնց առատաձեռն ներդրումները մեզ հնարավորություն է տվել կյանքի կոչել մեր նպատակները: Մենք նաև երախտապարտ ենք մեր Խորհրդատուների խորհրդին, որի փորձն ու խորհուրդներն ուղղորդել են մեր ռազմավարական նախաձեռնությունները, երախտապարտ ենք մեր նվիրյալ աշխատակազմին և հոգաբարձուների խորհրդին, որոնց շարունակական ջանքերն ու հանձնառությունն անգնահատելի են եղել մեր ձեռքբերումներում: Միասին մենք շարունակելու ենք կերտել կենսունակ, դիմակայուն և ինքնաբավ համայնքներ՝ մեր գալիք սերունդների համար:

Մեր գործը դեռ անավարտ է: Այս 20-ամյա հանգրվանը միայն մեր անցյալի ձեռքբերումներն արձանագրելու առիթ չէ: Սա նաև ապագայի նկատմամբ մեր հանձնառության վերահաստատումն է: Նայելով ապագային՝ մենք շարունակելու ենք նպաստել Հայաստանի համայնքների զարգացմանը և լավ կառավարմանը խոչընդոտող նոր մարտահրավերների հաղթահարմանը:

2022-ից 2024 թթ «Ուրբան հիմնադրամի» կողմից իրականացված ծրագրերի ամփոփագիր

2022-ից 2024 թվականներին «Ուրբան հիմնադրամը» առանցքային դեր է ունեցավ Հայաստանում համանքային զարգացման, կառավարման, հումանիտար և բնապահպանական մարտահրավերների հաղթահարման գործում՝ իրականացնելով ռազմավարական նախաձեռնություններ՝ նպաստելով համայնքների և բնակչության երկարաժամկետ կայունությանն ու բարեկեցությանը: Հիմնադրամը համագործակցելով «Չուզ լով» (Choose Love UK) բիտանական կազմակերպության հետ՝ աջակցություն ցուցաբերեց 2023թ սեպտեմբերին Արցախից զանգվածային բռնի տեղահանված ընտանիքներին՝ Ճամբարակում և Վարդենիսում ավելի քան 100 ընտանիքի (430 անձ) տրամադրելով անհրաժեշտ կենցաղային ապրանքներ և կահույք: Ի լրումն՝ Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ՝ «Ուրբան հիմնադրամը» մասնակցեց «Բնակարանային կարիքների արագ գնահատմանը», որի նպատակն էր բնակարանային ապահովման և քաղաքականության լուծումներ և առաջարկել տեղահանված անձանց (ավելի քան 100,000) համար:

Կարևորելով լավ կառավարման և քաղաքացիական հասարակության կարևորությունը՝ «Ուրբան հիմնադրամն» ակտիվորեն աջակցեց համայնքներին և հկ-ներին՝ թափանցիկության, հաշվետվողականության և ինստիտուցիոնալ ամբողջականության բարձրացման ուղղությամբ: ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործուն քաղաքացիական հասարակություն» (CSA) ծրագրի շրջանակներում «Ուրբան հիմնադրամը» նպաստեց ՔՀԿ-ների կայունությանը, ազդեցությանը քաղաքականության վրա և ներգրավվածությանը համայնքային կյանքին: Միաժամանակ, Հիմնադրամը խթանեց համայնքային կառավարման բարեվարքության բարելավմանը՝ ներդնելով և տեղայնացնելով համայնքների բարեվարքության գնահատման գործիքը (European Scorecard), էթիկայի և թափանցիկության եվրոպական լավագույն փորձը Հայաստանի հինգ համայնքների համար: Մշակութային ոլորտում «Ուրբան հիմնադրամն» առանցքային դեր խաղաց Իջևանի համայնքի մշակութային զարգացման ռազմավարության աջակցության մշակման գործում՝

խթանելով ստեղծարար, մշակութահենք գործարարությունը և քարտեզագրելով մշակութային ժառանգության հուշարձանները:

Միաժամանակ, «Ուրբան հիմնադրամը» բարելավեց համայնքների դիմակայունությունը՝ խթանելով տեղական առաջնորդությունն ու քաղաքացիների մասնակցությունը: Ախուրյանի համայնքի զարգացմանն ուղղված նախաձեռնությունը համախմբեց համայնքի բնակչությանը, խթանեց առաջնորդական հմտությունների ձևավորմանը և ներդրեց քաղաքացիության աստիճանը չափելու նորարար գործիք՝ «Քաղաքացիության ինդեքսը»: Տեղ համայնքում իրականացված՝ ավելի քան 300,000 դոլար արժողությամբ ոռոգման նախաձեռնությունը, որը համաֆինանսավորվել է ՀՀ կառավարության, ԱՄՆ ՄԶԳ-ի, ՄԱԿ-ի ՓԴԾ-ի և Լիտվայի դեսպանատան կողմից, ապահովել է 330 հա հողատարածքի ոռոգում՝ աջակցելով 1200 բնակչի և ամրապնդելով պարենային անվտանգությունը:

Բնապահպանական կառավարումը նույնպես «Ուրբան հիմնադրամն» գործունեության առանցքում էր: Աղբահանության ոլորտում այն իրականացվեց ԵՄ կողմից ֆինանսավորվող BeECO նախագծի միջոցով (ռումինական, վրաց, մոլդովական գործընկերների հետ համատեղ), որը նախաձեռնել էր աղբամաքրման արշավներ սևծովյան ավազանում (Հայաստանում՝ մասնավորապես Սևանա լճի ավազանում), Գյումրի և Վանաձոր համայնքների համար աղբահանության ռազմավարությունների մշակման, հաստատման, աղբի վերմշակման ենթակառուցվածքների տեղադրման միջոցով, ինչպես նաև Գյումրիում աղբի կառավարումը պիրոլիզի տեխնոլոգիական մոտեցմամբ խթանելու միջոցով:

«Ուրբան հիմնադրամի»՝ ջրային ոլորտի կայուն կառավարմանան հաձնառությունն ընդլայնվեց ՀՀ կառավարության, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԿ-ի ՓԴԾ, ՀՀ-ում Ճապոնիայի, Լիտվայի դեսպանատների և Կոկա Կոլա հիմնադրամի համատեղ աջակցությամբ իրականացված նախաձեռնությունների միջոցով: «Ուրբան հիմնադրամի» անմիջական մասնակցությամբ հազարավոր մարդկանց համար իրականացվեց խմելու ջրի և ոռոգման 5 ենթակառուցվածքային ծրագիր՝ կիրառելով ջրախնայող և էներգա-արդյունավետ տեխնոլոգիաներ: «Ուրբան հիմնադրամի» աջակցեց կառավարության գործընկերների օրենսդրության բարելավման, ջրային ոլորտի ռազմավարության մշակման նախապատրաստական աշխատանքներում: Ի լրումն՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված ելակետային ուսումնասիրության արդյունքների հիման վրա, կիզորացվեն ջրօգտագործողների 6 ընկերություններ, ինչը կնպաստի ջրային ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

«Ուրբան հիմնադրամը» նաև նպաստեց անդրսահմանային և տարածաշրջանային համագործակցությանը՝ միավորելով հայաստանյան և միջազգային ջանքերը Հայաստանի սահմանամերձ Խնձորեսկ և Տեղ (Սյունիքի մարզ), Խաշթառակ և Վազաշեն (Տավուշի մարզ) բնակավայրերում ենթակառուցվածքների, կառավարման և տնտեսական կայունության բարձրացման նպատակով: Միջազգային գործընկերների հետ համագործակցության միջոցով «Ուրբան հիմնադրամը» ապահովել է, որ ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներն օգտագործվեն արդյունավետորեն՝ ի նպաստ տարածաշրջանի կայունության և տևական զարգացման:

Այս բազմակողմանի և ռազմավարական նախաձեռնությունների շնորհիվ՝ «Ուրբան հիմնադրամը» խթանեց Հայաստանում մարդասիրական օգնությանը, համայնքների դիմակայունությանը, կառավարումն բարելավմանը, բնապահպանական կայունությանը և տարածաշրջանային համագործակցությանը:

«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահենք զարգացում» ծրագիրը

2022թ հոկտեմբեր - 2022թ փետրվար

Ֆինանսավորում. ԱՄՆ ՄԶԳ

Գործընկերներ. ՀԿ Կենտրոն – հիմնական իրականացնող, Կանայք՝ հանուն զարգացման ՀԿ, ԿՈՄՊԱՍ ՀԿ

«CapSLoc. *Կարողունակ և կայուն համայնքահենք զարգացում*» ծրագիրը ամրապնդեց Ախուրյան բազմաբնակավայր համայնքի (35 բնակավայր) կարողությունները՝ հնարավորություն տալով բնակիչներին ինքնուրույն առաջնորդել իրենց զարգացումը: Ռազմավարական միջամտությունների և նպատակային գործողությունների շնորհիվ համայնքն ակտիվորեն ներգրավվեց իր զարգացման գործընթացում՝ հիմնվելով շարունակական ուսուցման, մասնակցային որոշումների կայացման և արդյունավետ կառավարման վրա: Ծրագիրը համայնքին տվեց սեփական ապագան ձևավորելու հստակ գործիքներ ու մեխանիզմներ: Ձեռնարկվեցին մի շարք կարևոր քայլեր, այդ թվում՝ համայնքային առաջնորդների թիմի (ՀԱԹ) ձևավորումը, որը միավորեց համայնքի առանցքային դերակատարներին և ամրապնդեց նրանց համագործակցությունը: Հիմնական զարգացման ուղղությունները պարզելու նպատակով իրականացվեց համայնքի ռեսուրսների և հնարավորությունների քարտեզագրում՝ տեղական առաջնորդների ու շահագրգիռ կողմերի ներգրավմամբ: Համայնքի անդամների կարողությունների շարունակական զարգացման համար հիմնադրվեց *Տեղական առաջնորդների ակադեմիան (ՏԱԱ),* իսկ բնակավայրերում ստեղծվեցին Համայնքային զարգացման կենտրոններ (ՀԶԿ): Այս միջոցառումների արդյունքում Ախուրյան համայնքը դարձավ ավելի ուժեղ, ինքնուրույն և դիմակայուն՝ հիմնված տեղեկացված որոշումների, ակտիվ քաղաքացիական ներգրավվածության և կայուն կառավարման սկզբունքների վրա: Ի լրումն՝ ծրագրի շրջանակում իրականացվեց *«Քաղաքացիության ինդեքս»* նորարարական հետազոտությունը, որը մշակվել է «Ուրբան Հիմնադրամի» կողմից: Այն հնարավորություն տվեց գնահատելու համայնքի բնակիչների քաղաքացիական ինքնության մակարդակը և դարձավ համայնքի հետագա զարգացման ու բարելավման ուղեցույց:

ABC.GoV : Դաշինք՝ հանուն կանաչ և կայուն կառավարման

2021թ հունվար to 2024թ մայիս

Ֆինանսավորում. ԵՄ

«Ուրբան հիմնադրամի» անմիջական օժանդակությամբ և ԵՄ աջակցությամբ՝ Գյումրի և Վանաձոր քաղաքները հնարավորություն ունեցան բարելավել քաղաքների կառավարման համակարգը և քաղաքային պլանավորման, աղբի վերամշակման և հանրային տրանսպորտի ոլորտներում երկու համայնքների մոտեցումները համապատասխանեցնել ազգային ու եվրոպական չափանիշներին: Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ կառավարման նախաձեռնությունը, որը իրականացվեց լեհական Պիլա համայնքի հետ համատեղ, նպատակ ուներ բարելավել համայնքային ծառայությունները՝ առաջարկելով էկոլոգիապես մաքուր, արդյունավետ և համապարփակ լուծումներ և բարձրացնելով հանրային իրազեկությունը առողջության ու շրջակա միջավայրի վրա պլաստիկ թափոնների և վառելիքով աշխատող տրանսպորտի բացասական ազդեցության վերաբերյալ: Ծրագիրը նաև Վանաձորի, Գյումրու և Պիլայի համայնքապետարանների աշխատակիցներին զինեց քաղաքային կառավարման համար անհրաժեշտ գիտելիքներով: «Ուրբան հիմնադրամը», մասնավորապես, տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն տրամադրեց աղբահանության կառավարման պլանավորման, ֆինանսական վերահսկողության, գնումների, դոնորների ծրագրերի կառավարման, այլընտրանքային ֆինանսավորման ներգրավման, հաղորդակցության ռազմավարության և հանրային մասնակցության վերաբերյալ: Երկու համայնքները բարելավելցին քաղաքային կառավարման և աղբահանության իրենց գիտելիքները՝ ծանոթանալով եվրոպական փորձին Լեհաստանի Պիլա և Ֆրանսիայի Լիոն քաղաքներում: Արդյունքում, Գյումրի և Վանաձոր

համայնքները ձեռք բերեցին կարողություններ՝ արդյունավետ կառավարելու ծրագրի շրջանակում ներդրված ենթակառուցվածքները, այդ թվում՝ ԱՏՀ համակարգը, կանաչ հանրային տրանսպորտը և պլաստիկ թափոնների վերամշակման հոսքագիծը:

Local Cultural Development Strategy for Ijevan Community

Supported by EU and Goethe Institut
Partners: lead – Ijevan Municipality, Armenia
December 2021- August 2024

Իջևան համայնքում իրականացված ծրագրի նպատակն էր օգնել համայնքին համադրել մշակույթի և տնտեսության զարգացումը: 2021-2024 թթ ծրագիրը բնակչության կարծիքը հաշվի առնելով, ուսումնասիրեց համայնքի, խորհրդակցեց քույր-քաղաքների հետ՝ լավագույն փորձին ծանոթանալու նպատակով: Երկարաժամկետ նպատակն էր բարելավել մշակութային ոլորտի կառավարումը՝ կազմակերպելով մշակութային փառատոներ և տրամադրելով փոքր դրամաշնորհներ տնտեսական ուղղվածությամբ ստեղծագործ գաղափարների համար: Արդյունքում, ծրագիրն օգնեց համայնքին գույքագրել Իջևանի մշակութային ժառանգությունը և ստեղծել GIS քարտեզ, բարելավեց մշակութային ոլորտի կառավարումը փորձի փոխանակման միջոցով և վերապատրաստեց համայնքի 60 բնակչի՝ ստեղծագործ մոտեցումներով մշակույթը զարգացնելու նպատակով: Այս ծրագիրն իրականացվեց ԵՄ և Գյոթեի անվան ինստիտուտի կողմից՝ օգնելով մշակութային կյանքի ակտիվացմանը, համագործակցության խթանմանը և տնտեսական զարգացմանը:

Needs Assessment and design of sustainable and replicable model of urban greening

Supported by EU/ATP
November 2021-April 2022

ԵՄ-ի և Ծառատունկ հիմնադրամի (ATP) աջակցությամբ, «Կանաչ համայնք-դիմակայուն ապագա» ծրագրի շրջանակներում, «Ուրբան հիմնադրամը» իրականացրեց կարիքների գնահատում Հայաստանի 15 շահառու բնակավայրում: Այս նախաձեռնության նպատակն էր մշակել կայուն և կանաչ կառավարման ընդօրինակելի մոդել մարզային փոքր բնակավայրերի համար: Արդյունքում, բացահայտված խնդիրների հիման վրա, պատրաստվեց գնահատման զեկույց՝ առաջարկություններով Ախթալայ, Ալավերդի Արթիկ, Գյումրի, Իջևան, Դիլիջան, Սպիտակ, Տաշիր, Վանաձոր, Թումանյան, Մարալիկ, Այրում, Նոյեմբերյան, Ստեփանավան և Բերդ բնակավայրերի համար: «Ուրբան հիմնադրամը» նաև մշակեց է կանաչ կառավարման նմուշային մոդել, որն առաջարկվեց գործընկեր բնակավայրերի՝ խթանելու իրենց բարելավված քաղաքային կանաչ պլանավորումը և կանաչ կենսակերպը:

A Helping Hand for Newly Consolidated Communities

Supported by Dutch Embassy in Armenia
November 2021-November 2022

«Ուրբան հիմնադրամի» այս նախաձեռնությունը նպատակ ուներ ուժեղացնել ռազմավարական պլանավորման և մասնակցային որոշումներ կայացնելու կարողությունները Տեղ (Սյունիքի մարզ) և Իջևան (Տավուշի մարզ) բազմաբնակավայր համայնքներում՝ խթանելով տեղական ինքնակառավարումը և հնարավորություն տալով բնակիչներին հստակ ձևակերպել և լուծել առաջնահերթ խնդիրները: Տեղ համայնքը որպես առաջնահերթություն ընտրեց զբոսաշրջային ենթակառուցվածքի՝ Մելիք-Բարխուդարի նստավայրի զարգացումը՝ որպես պատմամշակութային ժառանգության հուշարձան, իսկ Իջևանում առաջնահերթ համարվեց Բերքաբեր գյուղի ֆուտբոլի դաշտի կառուցման անհրաժեշտությունը՝ երիտասարդների ժամանցը բարելավելու նպատակով:

Երկու նախաձեռնություններն էլ հաջողությամբ իրականացվեցին ծրագրի շրջանակում՝ Նիդերլանդների դեսպանության ֆինանսավորմամբ:

Improved Water Governance

Armenia Improved Water Management for Sustainable Economic Growth

Supported by USAID
Partners: Deloitte Consulting, US (lead), University of Colorado Boulder, US
July 2022-February 2025

Ծրագիրն օգնեց Հայաստանին բարելավել ջրային ոլորտի կառավարումը՝ ներդնելով նոր տեխնոլոգիաներ և , բարելավելով օրենսդրությունը: Ծրագիրը բարելավեց երկու ռազմավարական դիտակետ, որոնց շնորհիվ վերահսկվում է Սևանա լճից ջրի ելքն ու մոտքը: Իրականացվեց ոռոգման և խմելու ջրի չորս ծրագիր Սյունիքի (Խնձորեսկ և Տեղ) և Տավուշի (Վազաշեն և Խաշթառակ) մարզերի սահմանամերձ գյուղերում: Այս ծրագրերն իրականացավեցին Գորիս, Իջևան և Տեղ համայնքների, Հայաստանի կառավարության, Հովնանյան հիմնադրամի, Եվրամիության, Ավստրիական զարգացման գործակալության, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի ԳԷՀ ՓԴԾ-ի և Հայաստանում Լիտվայի դեսպանության հետ համագործակցությամբ: Տեխնիկական աջակցություն ցուցաբերվեց նաև Սյունիքի (Լեհվազ), Գեղարքունիքի (Վահան, Գեղարքունիք, Կարմիրգյուղ), Վայոց Ձորի (Բարձրունի), Կոտայքի (Մայակովսկի) և Արարատի (Մասիս) մարզերի յոթ գյուղերի նախագծային աշխատանքներում և ջրախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ ներդրման հարցում: Ծրագիրն աջակցեց ջրային ոլորտի բարեփոխումներին՝ օգնելով կառավարությանը բարելավել օրենսդրությունը և նախաձեռնել ջրային ոլորտի ռազմավարության մշակումը:

(Note: this project has been terminated due to the global termination of USAID projects)

Irrigation for Resilience: Tegh Settlement

Supported by UN GEF SGP
August 2023-August 2024

Ծրագիրը նպատակ ուներ ապահովել Սյունիքի մարզի Տեղ սահմանամերձ գյուղը ոռոգման ջրով՝ նպաստելով ավելի արդյունավետ և կայուն գյուղատնտեսության զարգացմանը և բարելավելով բնակիչների սոցիալական պայմանները: Ռազմական գործողությունների հետևանքով գյուղը կորցրել էր իր հողատարածքների մեծ մասը, իսկ մնացածը չէին ոռոգվում, ինչը հանգեցնում էր բնակիչների եկամուտների նվազմանը: «Ուրբան հիմնադրամը» համագործակցեց ՄԱԿ-ի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի (ԳԷՀ ՓԴԾ) հետ՝ նախաձեռնելով մի ծրագիր, որը նախատեսում էր ոռոգել ավելի քան 330 հա տարածք՝ օգտագործելով Որոտանի ջրատարի ջուրը, որը վերջանում էր մոտակա կիրճում: ԳԷՀ ՓԴԾ-ն աջակցեց այս նախաձեռնությանը՝ կառուցելով փականային խուցը, տեղադրելով 13 կվ հզորությամբ արևային վահանակներ՝ ապահովելու վերականգնվող էներգիայի մի մասը, և վերակառուցելով 80մ³ ճնշման կարգավորիչ ջրամբարը՝ հիդրոմեկուսացնելով այն և տեղադրելով լողանային փական: Այս քայլերը լրացրին կառավարության և այլ դոնորների ներդրումները: 300,000 ԱՄՆ դոլար սուբվենցիայի միջոցով համայնքը կառուցեց 900 մ երկարությամբ ջրատար՝ ջուրը հասցնելու համար 5,000 մ երկարությամբ վերանորոգված ներքին բաշխման ցանցին: Քանի որ գյուղը բարձրադիր է, ԱՄՆ ՄԶԳ-ն աջակցեց 100 լ/վրկ հզորությամբ էներգաարդյունավետ պոմպերի տեղադրմանը: Պոմպակայանը կառուցվեց Լիտվայի դեսպանատան կողմից՝ ԵՄ «Կայուն Սյունիք» նախաձեռնության շրջանակներում: Արդյունքում, մոտ 300 ընտանիք ստացավ բավարար ջուր՝ կայուն գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: Տեղ գյուղի ոռոգման խնդիրը ամբողջությամբ լուծվեց:

Assisting Tegh village access to irrigation water by joining efforts with other committed donors

Supported by Lithuanian Embassy in Armenia

July-November 2023

«Ուրբան հիմնադրամը» աջակցեց Տեղ համայնքին ապահովել ոռոգման ջրի հասանելիությունը տարբեր դոնորների, այդ թվում Հայաստանում Լիտվայի դեսպանության հետ, ռազմավարական համագործակցության միջոցով: Դեսպանությունը աջակցեց պոմպակայանի կառուցմանը, որը համալրվեց երկու էներգախնայող պոմպերով՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից: Բացի այդ, կառավարությունը կառուցեց 900 մետր ճնշումային խողովակաշար, որը ջուրը տեղափոխում է 80 մ³ տարողությամբ ջրամբար (ՄԱԿ ԳԷՀ ՓՄԾ-ի աջակցությամբ), և բաշխիչ ցանց (կառավարության աջակցությամբ): ՄԱԿ ԳԷՀ-ը տեղադրեց արևային վահանակներ, որոնք ապահովում են կայանի էներգիայի պահանջի ավելի քան 30%-ը՝ նվազեցնելով գործառնական ծախսերը: Նախաձեռնության արդյունքում ոռոգվում է ավելի քան 330 հա չորային հող, ինչը կպարելավի 1,200 բնակչի (մոտ 300 ընտանիքի) եկամուտները, հնարավորություն կտա բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը և կխթանի գյուղական տնտեսական աճին:

Pilot Renovations of Drinking Water Supply System and Ensuring Reconstruction and Energy Efficiency of the Secondary School of Gargar Village

Supported by:

- Embassy of Japan in Armenia, Coca-Cola Foundation and: Renovation of drinking water pipeline
- Izmirlyan Foundation: ensuring reconstruction and energy efficiency of the secondary school
- Partner: Armenia Energy Agency

December 2021 – December 2024

Լոռու մարզի Գարգառ գյուղում «Ուրբան հիմնադրամ»-ի և «Հայաստանի էներգետիկայի գործակալության» համատեղ նախաձեռնությունը նպատակ ուներ բարելավել համայնքի բնակիչների կենսապայմանները: Ծրագիրը կարևորեց մի քանի ուղղություններ. որակյալ խմելու ջրի, պաշաճ կրթության ապահովում և աղբի տեսակավորման գործիքակերպի ներդրում: Ծրագրի շրջանակում մշակվեց խմելու ջրի ամբողջական ցանցի ինժեներական նախագիծը և իրականացվեց հիմնական խողովակաշարի մասնակի կառուցում: Վերանորոգված խմելու ջրատարից օգտվեցին բնակիչները, գյուղի դպրոցը, բուժկետը և մարզական կենտրոնը, ինչպես նաև համայնքապետարանը: Միաժամանակ, կրթական պայմանների բարելավման նպատակով, նախագծվեց և կառուցվեց դպրոցի երկրորդ հարկը. կառուցվեց չորս նոր դասասենյակ՝ էներգաարդյունավետ պատուհաններով: Դպրոցի էներգաարդյունավետության բարձրացման հաջորդ քայլը եղավ տանիքում արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրումը: Ծրագիրը նաև օգնեց ձեռք բերել պլաստիկ թափոնների տեսակավորման աղբամաններ, որոնք տեղադրվեցին հանրային հաստատություններին կից, և բարելավեց դպրոցի անձնակազմի, աշակերտների և բնակիչների բնապահպանական կրթությունը: Արդյունքում, այս ծրագրից անմիջականորեն օգտվեցին մոտ 189 աշակերտ, 35 դպրոցի աշխատակից, 4 բուժաշխատող, մարզադահլիճի 30 այցելուներ և 1492 բնակիչ (421 ընտանիք): Այս ամենը հնարավոր դարձավ Ճապոնիայի դեսպանատան, Կոկա-Կոլա հիմնադրամի և Իզմիրյան հիմնադրամի առատաձեռն աջակցության շնորհիվ:

Baseline Survey of Water Users Associations

Supported by: the World Bank

December 2023-March 2024

Այս առաջադրանքի նպատակն էր տրամադրել Համաշխարհային բանկին (ՀԲ) հստակ, լրամշակված և վստահելի տեղեկատվություն Հայաստանի Ջրօգտագործողների ընկերությունների

(ՁՕԸ) վերաբերյալ: Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվեցին հինգ ՁՕԸ-ների հիմնական մարտահրավերներն ու հնարավորությունները՝ հիմք ստեղծելով դրանց աջակցության ծրագրի մշակման և ծախսերի գնահատման համար: Կառավարման, ֆինանսական, իրավական և տեխնիկական կարողությունների համապարփակ գնահատման միջոցով ուսումնասիրվեցին ՁՕԸ-ների մարդկային և տեխնիկական ռեսուրսները, ջրային ռեսուրսների պլանավորումը, ֆինանսական կառավարումը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Գնահատման արդյունքները Համաշխարհային բանկը կօգտագործի ՁՕԸ-ների արդյունավետության բարձրացման նպատակով՝ ներառյալ աշխատանքների թվայնացման և ծախսերի հաշվարկման ռազմավարությունների մշակման համար:

Improved Waste Governance

Technical assistance to ECOTEC in using pyrolysis technology for solid waste management in Gyumri

Supported by ECOTEC Company
December 2023-January 2024

«Ուրբան հիմնադրամը» ցուցաբերեց տեխնիկական աջակցություն «ԷԿՈՏԵԿ» ընկերությանը՝ Գյումրիում պիրոլիզային տեխնոլոգիայով և MARS VI-4000 այրիչներով կոշտ կենցաղային թափոնների կառավարման վերաբերյալ համալիր տեխնիկական առաջարկ և իրավական հիմնավորումներ պատրաստելու համար: Սա կլինի MARS VI-4000 այրիչների առաջին կիրառումը Հայաստանում: Թափոնների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով «ԷԿՈՏԵԿ» ընկերությունը համաձայնություն ձեռք բերեց Գյումրու համայնքապետարանի հետ՝ սարքավորումների փորձարկումն իրականացնելու համար: Ի լրումն՝ մանրակրկիտ վերլուծվեց իրավական դաշտը՝ թափոնների կառավարման ճիշտ իրականացումն ապահովելու և նորարարական տեխնոլոգիաների ներմուծումն ապահովելու համար:

Humanitarian Response

Armenia Rapid Housing Needs Assessment & Strategic Response Framework project

Supported by the World Bank
November-December 2023

2023 թ սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 4-ը ավելի քան 100,000 էթնիկ հայեր (Հայաստանի բնակչության մոտ 3%-ին համարժեք) բռնի տեղահանվեցին իրենց պատմական հայրենիքից՝ Արցախից (Լեռնային Ղարաբաղ): Հակամարտության ծավալման հետևանքով նրանք ստիպված եղան ապաստան գտնել Հայաստանում, ինչը հանգեցրեց լուրջ բնակարանային և մարդասիրական խնդիրների: Արձագանքելով այս իրավիճակին՝ Համաշխարհային բանկը՝ «Ուրբան հիմնադրամի» հետ համագործակցությամբ, նախաձեռնեց Հայաստանում բնակարանային կարիքների արագ գնահատում: «Ուրբան հիմնադրամը» վերլուծեց փախստականների բնակարանային կարիքները՝ պարզելու, թե ինչպիսի կացարաններում են նրանք ապրում (վարձակալությամբ, կոլեկտիվ կենտրոններում և այլն): Ուսումնասիրվեցին նաև գործող պետական աջակցման ծրագրերը և 1988թ երկրաշարժից հետևանքով անօթևան դարձած ընտանիքների համար ներդրված բնակարանի գնման վկայագրերի կիրառման արդյունավետությունը: Բացի այդ, Հիմնադրամը գնահատեց Հայաստանի բնակարանային շուկայի վիճակը՝ ազատ և մատչելի բնակարանների առկայությունը և արժեքը: Իրականացվեց նաև 1988թ երկրաշարժից հետո կիրառված և ընթացիկ՝ բնակարանի գնման վկայագրերի ծրագրերի վերլուծություն՝ հասկանալու դրանց արդյունավետությունը: Այս

ուսումնասիրության արդյունքները կօգնեն կառավարությանը բարելավել բնակարանային քաղաքականությունը և ապահովել կայուն լուծումներ փախստականների ընտանիքների համար:

Supporting Armenians Forcibly Displaced from their Homeland, Artsakh (Nagorno Karabakh)

Supported by: Choose Love (UK), University of Castilla-La Mancha (Spain)
December, 2023 to October, 2024

«Ուրբան հիմնադրամը»՝ համագործակցելով «Չուզ լով» (Choose Love UK) բիտանական կազմակերպության հետ, աջակցեց 112 ընտանիքի (429 անձի), որոնք տեղահանվել էին Արցախից և ներկայում բնակվում են ՀՀ սահմանամերձ Ճամբարակ (91 ընտանիք) և Վարդենիս (21 ընտանիք) համայնքներում: Այս աջակցությունը արձագանքն էր 2023թ սեպտեմբերին տեղի ունեցած զանգվածային տեղահանման, երբ ավելի քան 100,000 արցախահայեր տեղահանվեցին իրենց բնօրրանից՝ շարունակական շրջափակման և ռազմական գործողությունների հետևանքով: «Ուրբան հիմնադրամը» ընտանիքներին տրամադրեց անհրաժեշտ կարևոր տնային պարագաներ՝ 73 սառնարան, 16 լվացքի մեքենա, 7 գազօջախ, 10 էլեկտրական վառարան, 8 հեռուստացույց և 3 էլեկտրական ջրատաքացուցիչ: Ի լրումն՝ տրամադրվել են մահճակալներ, պահարաններ, սեղաններ, աթոռներ և խոհանոցային պարագաներ: Ընտանիքների ինքնաբավությունը խթանելու նպատակով՝ երեք ընտանիքի տրամադրվեց կարի մեքենա և համակարգիչ: «*Այս նախաձեռնությունը արցախահայերին երբևէ տրամադրված ամենամեծ օգնությունն է*» գնահատել է Ճամբարակի համայնքի տեղակալ Ռոբերտ Օհանյանը: Լրացուցիչ օգնություն տրամադրվեց Կաստիլիա-Լա Մանչայի համալսարանի (Իսպանիա) աջակցությամբ 6 տեղահանված ընտանիքների համար Շամբարակում՝ միանձնյա ծերեր, խոշոր ընտանիքներ և խիստ անհրաժեշտության մեջ գտնվողները:

(Note: this project has been terminated due to the global termination of USAID projects)

Improved Good Governance

Գործուն քաղաքացիական հասարակություն

Աջակցություն
Partners: lead - US Counterpart International
November 2022-February 2024

«Գործուն քաղաքացիական հասարակություն» (CSA) ծրագիրը նպաստեց Հայաստանի քաղաքացիական հասարակության (ՔՀԿ) հատվածի զարգացմանը՝ ուժեղացնելով նրանց ֆինանսական հնարավորություններն ու քաղաքական ազդեցությունը: CSA-ն աջակցեց ՔՀԿ-ներին դոնորային ֆինանսավորումից անցում կատարել դեպի ավելի բազմազան, հատկապես տեղական աղբյուրներ՝ ապահովելով կայունություն և երկարաժամկետ հուսալիություն: Ծրագիրը բարձրացրեց 10 ազգային և 20 համայնքային ՔՀԿ-ների արդյունավետությունը շահերի պաշտպանության, ծառայությունների մատուցման, քաղաքական բարեփոխումների և կառավարման վերահսկողության ոլորտներում՝ օգնելով նրանց լուծել համայնքային խնդիրները և հասնել շոշափելի արդյունքների: ՔՀԿ-ների և պետության միջև կառուցողական երկխոսությունը խթանելով՝ CSA-ն բարելավեց ՔՀԿ-ների կարողությունները՝ ազդելու օրենսդրական գործընթացների վրա և վերահսկելու քաղաքականությունների իրականացումը: Այս ամենի արդյունքում՝ հայաստանյան ՔՀԿ-ները ավելի ակտիվորեն ներգրավվեցին հանրային քննարկումներում և զարգացման նախաձեռնություններում:

(Note: this project has been terminated due to the global termination of USAID projects)

Promoting Integrity and Public Ethics, as Drivers of Good Governance

Supported by the Embassy of the Netherlands
June 2022-June 2023

2022թ հունիսից-2023թ հունիսը Նիդերլանդների դեսպանության ֆինանսավորմամբ «Ուրբան հիմնադրամը», Հայաստանի առաջնահերթություններին համահունչ, տեղայնացրեց Եվրոպայի խորհրդի կողմից մշակված՝ բարեվարքության «Գնահատման եվրոպական գործիքը»՝ գործընկեր համայնքներին ծանոթացնելով բարեվարքության և հանրային էթիկայի հիմնարար սկզբունքներին: Տեղայնացումն առավել առարկայական դարձնելու նպատակով՝ ծրագիրը, նիդերլանդական VNG International-ի հետ համագործակցությամբ, ներկայացրեց հանրային էթիկայի Նիդեռլանդների փորձը: Գործընկեր համայնքներում բարեվարքության համակարգերի ձևավորման վաղ փուլում ծրագիրն աջակցեց Գյումրու, Վանաձորի, Ապարանի, Կապանի և Չարենցավանի համայնքներին՝ հատկորոշելու բարեվարքությանը և հանրային էթիկային վերաբերող խնդիրները: Ծրագրի արդյունքում բարեվարքության «Գնահատման եվրոպական գործիքը» համապատասխանեցվեց հայաստանյան համատեքստին՝ շահակիրների հետ քննարկումների հիման վրա: Համայնքապետարանների ներկայացուցիչները վերապատրաստվեցին՝ ծրագրի ավարտից հետո համայնքներում բարեվարքության գծով խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Democracy Tech Hackathon was hosted in Armenia

Supported by the Danish Alliance of Democracies
November 2024

2024թ նոյեմբերին Հայաստանում կայացավ ժողովրդավարական տեխնոլոգիաների առաջին հաքաթոնը: Միջոցառումն առաջացրեց խանդավառություն երիտասարդ մասնակիցների շրջանում, ովքեր ցանկություն հայտնեցին այն դարձնել շարունակական: Հաքաթոնն իրականացվեց մի շարք գործընկերների, այդ թվում՝ Քաունթերփարթ ինթերնեշնլի և «Ուրբան հիմնադրամի» կողմից իրականացվող ԱՄՆ ՄԶԳ «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագրի, Իմփաքթ հաբի, Սոշալ լաբի, Ֆրիդրիխ Նաուման հիմնադրամի և Ֆեմինո գլոբալի համատեղ աշխատանքի շնորհիվ: Հաքաթոնի հայաստանյան հաղթողը և իր հաղթող թիմակիցները Վրաստանից, Ուկրաինայից ու Մոլդովայից, 2025թ մայիսից կմեկնեն Կոպենհագեն՝ ներկայացնելու իրենց նախագծերը Ժողովրդավարության գլոբալ գագաթնաժողովին:

Improved Regional Cooperation

BeECO Joint actions for environmental protection in Black Sea Basin

Supported by EU Black Sea CBC instrument
Partners: ACTEDJ, Romania, ProNatura, Romania, Spectri NGO, Georgia
June 2020 - May 2022

Ծրագիրը (https://www.be-eco.ro/en_US/) խթանեց Սև ծովվի ավազանի շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ կրթության, իրազեկման և գետերի ու լճերի մաքրման արշավների միջոցով՝ գետերում և լճերում աղբի քանակը նվազեցնելու նպատակով: Ծրագրը հաջողությամբ բարելավեց հանրության իրազեկումը և կրթությունը գետերի և լճերի աղտոտման խնդիրների մասին՝ կազմակերպելով 8 համատեղ տեղեկատվական սեմինար և 25 կրթական դասընթաց գործընկեր երկրների դպրոցներում և համալսարաններում: Ծրագիրը նաև կազմակերպեց գետերի և լճերի առափնյա տարածքներում ապօրինի աղբաթափման ու աղբավայրերի կրճատմանն 4 կլոր-սեղան քննարկումներ՝ Գալաթիում, Կահուլում, Քութաիսիում և Երևանում: Ի լրումն՝ ծրագիրը խթանեց 3 բաղադրիչների՝ նվազեցում, կրկնօգտագործում և վերամշակում, կիրառումը աղբահանության կառավարման մեջ՝ անցկացնելով կարողությունների բարելավման 5 սեմինարներ: Ծրագրի շրջանակում կազմակերվեց գետերի մաքրման 4 համատեղ արշավներ և գործողություններ՝

Գալաթիում, Կահուլում, Քութահիսիում և Երևանում: Ծրագիրը նաև խթանեց համայնքներում գործարարների, հասարակական կազմակերպությունների և տեղական իշխանությունների համագործակցությունը: Գետերի և լճերի ափամերձ տարածքներում աղբի դեմ պայքարելու նպատակով ծրագիրը ստեղծեց համայնքային 4 հսկիչ խումբ:

ICT Industry Collaboration Promotion Project

Supported by Japan International Cooperation Agency (JICA)/Deloitte Tohmatsu Financial Advisory LLC (DTFA)

January 8, 2024 – January 2027

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) աջակցությամբ «Ուրբան հիմնադրամը» ադմինիստրատիվ և կազմակերպչական օժանդակություն տրամադրեց ճապոնական Deloitte Tohmatsu Financial Advisory (DTFA) ընկերությանը, որը նպատակ ունի նպաստել Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի արդյունավետ զարգացմանը՝ ներգրավելով ռազմավարական գործընկերների, այդ թվում՝ ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարությանը և տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի կազմակերպություններին: Հիմնադրամը կազմակերպեց հանդիպումներ DTFA-ի, կառավարության և SS ընկերությունների միջև՝ ապահովելով արդյունավետ քննարկումներ, իրականացրեց հարցումներ՝ պարզելու այն հայաստանյան ընկերություններին, որոնք կարող են համագործակցել ճապոնական կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով երկկողմ բիզնես հնարավորությունները: Ավելին, Հիմնադրամը կազմակերպեց առերես և առցանց սեմինարներ ու աշխատաժողովներ, որտեղ ոլորտի մասնագետները փոխանակվեցին գիտելիքներով՝ նպաստելով Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի երկարաժամկետ զարգացմանը:

2022-2024թթ «Ուրբան հիմնադրամի» կողմից իրականացված ծրագրերը

Project	Date	Donor	Partners	Beneficiaries	
				Legal entities	Physical entities
Supporting Armenians Forcibly Displaced from their Homeland, Artsakh (Nagorno Karabakh)	December, 2023 to October, 2024	Choose Love (UK), University of Castilla-La Mancha (Spain)	- -	1 community 2 settlements	453
Baseline Survey of Water Users Associations	December 2023-March 2024	The World Bank	-	5 WUAs	-
Capacities for Sustained Locally-Led Development (CapSLoc)	October, 2022-February 2022	USAID	NGO Center, Women for Development, Caritas Armenia, COMPASS NGO	1 community 35 settlements	45,900
Civil Society in Action (CSA)	November 2022-February 2024	USAID	US Counterpart International (lead)	30 CSOs	-
Local Cultural Development Strategy for Ijevan Community	December 2021- August 2024	EU Goethe Institut (Germany)	Ijevan Municipality, Armenia (lead)	1 community 19 settlements	47,300
Armenia Improved Water Management for Sustainable Economic Growth	July 2022-February 2025	USAID Government of Armenia Embassy of Lithuania, Hovnanian Family Foundation, EU/Austrian Development Agency, World Food Program, UN GEF SGP	Deloitte Consulting (US) University of Colorado Boulder	9 community 11 settlements 2 ministries 5 universities	38,000
Irrigation for Resilience: Tegh Settlement	August 2023-August 2024		-		
Assisting Tegh village access to irrigation water	July-November 2023		-		
Pilot Renovations of Drinking Water Supply System and Ensuring Reconstruction and Energy Efficiency of the Secondary School of Gargar Village	December 2021 – December 2024	Embassy of Japan in Armenia, Coca-Cola Foundation Izmirlian Foundation	Armenia Energy Agency	1 community 1 settlement	1,500
Armenia Rapid Housing Needs Assessment & Strategic Response Framework project	November-December 2023	The World Bank	-	Government of Armenia	-
A Helping Hand for Newly Consolidated Communities	November 2021-November 2022	Embassy of the Netherlands in Armenia	-	2 communities 2 settlements	3,000

Project	Date	Donor	Partners	Beneficiaries	
				Legal entities	Physical entities
BeECO Joint actions for environmental protection in Black Sea Basin	June 2020 - May 2022	EU Black Sea CBC instrument	ACTEDJ, Romania, Romania, Spectri NGO, Georgia	3 countries	-
Promoting Integrity and Public Ethics, as Drivers of Good Governance	2022-2023,	Embassy of the Netherlands	-	5 communities 5 settlements	-
ABC.GoV: Alliance for Better City Governance				2 communities 2 settlement	200,000
Needs Assessment and design of sustainable and replicable model of urban greening	Nov 2021-Apr 2022	EU	ATP (lead)	15 communities 15 settlement	-
Technical assistance was provided to "ECOTEC" company for the preparation of a technical proposal and legal justifications for the processing of solid waste and the use of pyrolysis in Gyumri	December 2023 - January 2024	"ECOTEC"	-	1 community 1 settlement	-
ICT Industry Collaboration Promotion Project	January 2024-January 2027	Japan International Cooperation Agency (JICA) Deloitte Tohmatsu Financial Advisory	-	Ministry of High-Teck 30 ITC companies	-
Democracy Tech Hackathon	November 2024	Danish Alliance of Democracies	-	-	-

Address: 9 Alex Manoogian Str. Yerevan 0070, Armenia
Phone: + 374 60612076, + 374 60612070
Email: info@urbanfoundation.am
https://urbanfoundation.am/
https://www.linkedin.com/in/urban-foundation-ufsd-72634737/
https://www.facebook.com/urbanfoundationarmenia/